ԵՐԵՒԱՆԵՑ Պ. Ճանապարհորդը գրում է հետ. «Վաղարշապատայ շրջակայքում գտնուող միջնակարգ գիւղերից մին ևս Հայ-Թաղ գիւղն է, որ գտնուում է Վաղարշապատայ արևմտեան կողմում 5—6 վերստ հեռաւորութեամբ»։

«Այս գիւղացիք գաղթուած են Պարսկաստանի Խոյ, Սալմաստ, Ուրմ և Նախանդներից։ Սոքա պարապում են աւելի երկրագործութեամբ՝ քան թէ արհեստով և կամ առևտրական գործով՝ հետևելով իւրեանց նախորդաց։ Այս գիւղը բաղկանում է 110—115 տանից. ունին երկու քահանայք, և մի եկեղեցի Ս. Աստուածածին անունով»։

«Սոքա դեռ չճանաչելով ուսման յարգը՝ և վայելած չլինելով նորա քաղցրահամ պտուղները՝ բոլորովին հեռու են [illegible] կամ [illegible] ասած խօսքերից. և այդ պատճառաւ էլ՝ չունին նոքա դպրոց, որով զրկել են նոյն գիւղում գտնուող 150-ի մօտ առողջ և ուսումնածարաւ երեխայոց, և որոց ծնողք շատ անգամ բռնի մշակեցնումեն օրական 20—30 կոպէկի, չմտածելով որ նոցա անդառնալի ոսկի ժամերը վաճառում են ամենաչնչին գնով և որոյ ապագան [illegible] է»։

«Թող Հայ-Թաղեցիք օրինակ առնեն իւրեանց դրացի գիւղերից, զօ. Քեօրփալու, Զէյվայ, Աղջաղալայ և սոցա նման մեծ և փոքր գիւղերից, որոնցից ինքեանք ևս ոչ մի բանով պակաս չեն։ Ամեն մի գիւղում կայ մի դպրոց, կամ մի քանի երեխաներ ժողովուած սովորում են նոյն գիւղում գտնուող քահանաների և կամ փոքր ի շատէ գրել—կարդալ իմացող տիրացուների մօտ. (միայն այդ յուսալի չէ նոյն գիւղի . . . . . քահանաներից. սորանցից մէկը (քահանաներից) մինչև մօտ օրերս այնպէս էր համոզուած՝ որ Աստուածաշունչը (նստան) մի յատուկ աղգի անուն է, որի համար խօսակցութեան մէջ միշտ գործ կածէր նէ[illegible]ն անհարգ խօսքը»։

«Թէև մի քանի անգամ առարկայ եղած է դպրոցի շինութեան մասին, միայն այն ևս հարևանցի կերպով։ Ուստի ժողովուրդն ևս լսելով Տեսչից «[illegible]» ասելը՝ որ ինքեանք ևս այդ կուզէին՝ սկսեցին դպրոցի շինութեան համար պատրաստած մի քանի հարիւր աղիւսներն ևս վաճառել»։

«Մեծապէս շնորհակալութիւն կայտնէինք Հայ-Թաղ գիւղի հասարակութեան, և մանաւանդ այն անձանց՝ որոնք փոքր ի շատէ կճանաչեն ուսման յարգը, և գիտեն նորա արժանաւորութիւնն՝ աշխատէին հասարակութեան ևս հրահրել այդ ազգօգուտ շինութեան ուրախութեամբ մասնակցելու. որով ոչ միայն ազատած կլինէին իւրեանց խղճալի որդիքը այն չարաչար մշակութիւնից, որով ինքեանք ևս գիշեր և ցերեկ հալ ու մաշ էին եղած, այլ՝ կատարած կլինէին նոյնպէս և Աղգիս մշտարթուն Վեհափառ Կաթուղիկոսի միակ ցանկութիւնն ևս, որ ամենայն ուրախութեամբ իրրև գթառատ Հայր՝ աշխատում է Հայերիս ամենայնեան անհատի որդու յառաջադիմութեան»։

Սորա վերայ դարձնումենք թեմ. Տեսչի ուշադրութիւնը։

**
*

ԱԼԱՓԱՐՍԻՑ Պ. Սարգիս Փիլոյեանցը մեզ գրում է «Ալափարս գիւղի երիտասարդ Խորէն քահանայն Ջալալեանց ազնիւ զգացմունքէ շարժած, գեղեցի՞կ գործունեութեամբ կպարապի, այն է իր պարապ ժամերը իզուր չանցնելու մտօք իր սենեկին մէջ քառասնաչափ օրիորդք ժողոված ձրիաբար կդաստիարակէ նորանց, Աւանդելի դասերն են Կրօն, Ընթերցանութիւն, Վայելչագրութիւն և Երգեցողութիւն. ուրախ ամսէ ի վեր սկսած է և ցարդ աշխուժութեամբ շարունակում, գովելու արժանի՞ ձեռնարկութիւն, Խորհուրդ կուտայինք մեր քրոջ — յիշեալ քահանայի համեստափայլ տիկնոջ, որ օրական մի ժամ ևս նա իր կողմից նուիրէր աշակերտուհեաց հետ ասղնագործութեամբ պարապելուն. որով այր և կին ազգութեան անդաստանի մէջ ծառայելով, ազգի ապագայ մայրերուն մի բաժակ ուսման ցուրտ ջուր շնորհելով անշուշտ առանց վարձուց չեն մնալ։

Գովումենք յիշեալ քահանայի եռանդն ու աշխատութիւնը։

**
*

ՇԱՄԱԽՈՒՑ Պ. Շիրուանցին մեզ գրում է «Զգիտեմ Մշակի ո՞ր համարի մէջ կարդացի, որ Պ. Նաջարեանցը նուիրել է . . . մի արձանին 1 ր.։ Արդեօք աւելի լաւ չէ՞ր լինի, եթէ պ. Նաջարեանցը իւր դրամները փոխանակ այդ տեսակ բաների վերայ գործ դնելու, իւր և իւր եղբարց վերայ ծանրացած Շամախւոյ Հոգևոր Թեմ. Դպրոցի 2000 բուբլի պարտքը վճարէր, որը 6—7 տարի շարունակ առանց տոկոսի իւրեանց մօտ պահելով, զրկել են Շամախւոյ բազմաթիւ Հայ մանուկներին մտաւոր կերակուրից — ուսումից։ Մենք զարմանում ենք մեր Առաջնորդ Եպիսկոպոսի բռնած դիրքին և անտարբերութեան վերայ. մի՞թէ նա չէր կարող այն 120 բուբլին, որը ահա հինգ տարի շարունակ մեր աղքատ վիճակի կոնսիստորիայի գանձարանից վճարուում Պ. Նաջարեանցին իրրև սորա տան վարձ, որի մէջ ինքը բնակվում։ Թեմական դպրոցի պարտքին հաշուէր։ որով այս հինգ տարուայ ընթացքում գոնէ յիշեալ դպրոցի 600 բուբլին սաղայրած կլինէր։»

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԳՈՒՐԱՐԱՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ ՀԱՑՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԿՈՒՑ ՍԵՌԻՑ ԴՊՐՈՑԱՑ. ՔԱՂԵԱԼ Ի ԺԱՊԱՒԻՆԵԱԼ ՏՈՒՄԱՐԷ 1881 ԱՄԻ.

ՄՈՒՏՔ.	Ր-Ք.	Կ.
Մնացորդ պատրաստական դրամք ի 1879 ամէ . . .	605	19
Մուտք 1880 ամի.		
Գանձանակադրամք ժողովեալք յեկեղեցիս Աստրախանայ .	108	73
Արդիւնք որոշեալ ի գումարաց Եկեղեցեաց Աստրախանայ .	2996	50